ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

14 օգոստոսի...**2017 թվականի N**..*99-Ն*

ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 36-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» ՍՊ ընկերության 2017 թվականի հունիսի 27-ի թիվ 01/06 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի հուլիսի 10-ի թիվ Ֆ-200/17 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ վեց ամիս ժամկետով տրամադրել երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՈՒՀ-29/007 համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4560243 Y=8433552, 2.X=4560359 Y=8434254, 3.X=4562540 Y=8433898, 4.X=4562580 Y=8432898, 5.X=4561920 Y=8432753, 6.X=4561753 Y=8431898, 7.X=4561270 Y=8431898, 8.X=4561325 Y=8432802, բացառությամբ 1.X=4561562.2 Y=8433770.1, 2.X=4562248.0 Y=8433747.1, 3.X=4562246.6 Y=8433666.2, 4.X=4561601.3 Y=8433381.2 կոորդինատներով եզրագծված տարածքի (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված 284.1 հա տարածքում՝ ռեգիոնալ բնույթի երկրաբանաերկրաֆիզիկական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում ընդերքի ռեգիոնալ բնույթի երկրաբանաերկրաֆիզիկական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա

ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն, երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ